

լինին առողջակազմ և ունենան իրենց հետ վարչութեան ներկայացնելու համար ծննդական, բժշկի և իրենց հայրերի կոչմանը (ձանի) վկայականը և 150 բուբլի պատրաստի փող:



## Կ Ր Ո Ւ Ա Կ Ա Ն

### Ա.ՏՈՄԵԱՆՔ

Ատոմեանց մասին մեր ունեցած տեղեկութիւնները Յայսմաւուրքիցն են (օգոստ. 19) և ձառընախիներից: Վերջիններիս մէջ պահուած է Ատոմեանց ընդարձակ վկայարանութիւնը, հրատարակուած Սոփերք, Ժմ., 69—82: Այս աղբիւրներիցն է առնուած ներքեում լոյս տեսնող քերթուածի նիւթը: Ատոմեանց վկայարանութեան հեղինակն է Վարագի վանահայր Հայր Տաճառը, որի ժամանակը՝ բատ մեր հետազոտութեան՝ չէ ուշ 10-դ դարից, բայց և ոչ կանուխ 7-դ դարի առաջին կիսից: Ուրիշ անդամ՝ յոյս ունենալով վերադառնալ Տաճառ Վարագեցուն, այստեղ առ այժմ մի երկու տողով աւելորդ չենք համարում յիշեցնել ընթերցողներին Ատոմեանց պատմութեան համառօտութիւնը, ինչպէս որ հին աւանդութիւնից առած այդ գրի է առել Տաճառ Վարագեցին: Պարսից Յաղկերտ թագաւորի ժամանակ արքունի Դուռն է կոչուում հրովարտակով հայ ազատագունդը: Երկու մեծ նախարար՝ Ատոմ Գնունին և Մանաձիհր Ռշտունին՝ իրենց մարդկանցով գտնուում եին հեռաւոր «մարզում», այսինքն սահմանագլուռմ: Երեկի այժմեան Անդրկասպեան երկրի հարաւում: Ստանալով արքունի հրամանը և լաւ գիտենալով որ կանչչուում են Դուռը քրիստոնէութիւնն ուրանալու՝ մեծ արտմութեամբ ձանապարհ են ընկնում, երեկի դէպի արեմուտք: «Եւ հասեալ ի կիցս ձանապարհին, որ զատանէր յաշխարհն Հայոց», այսինքն հասնում են ձանապարհի այն կէտը՝ որտեղ բաժանւում էր ուղին: Մի ձանապարհը տանում էր դէպի հարաւ—արքունի Դուռը, միւսը՝ դէպի արելք—Հայաստան: Խոր-

հուրդ են անում և լաւագոյն համարում չգնալ արքունի կոչին, այլ վերադառնալ հայրենիք, բայց և իրեւ հաւատարիմ հպատակներ զենքով չդիմադրել, թագաւորը լսում է և բարկացած՝ պարսիկ զօրք և ուղարկում Ատոմեաններին պատժելու համար։ Անձեւացեաց նահանգում առանձնանալով Ատոմեանները պատրաստում են՝ ճգնաւորի խորհրդով՝ տեսիլներով՝ նահատակուիլ քրիստոնեութեան համար։ Բայց երթ երես առ երես հանգիպում են իրենց հալածող պարսիկ զօրքին, մի առ բոպէ մռանում են իրենց որոշումը — իրրեւ քրիստոնեաներ չդիմադրել չարին — և հնչում է ռազմական խրոխտ հրամանը՝ ձի կալէք, այսինքն՝ ձի հեծէք։ — «Իսկ քաջ նահատակացն տեսեալ զյարձակումն անօրինացն՝ ըստ սովորական իւրեանց արիութեանն՝ միմեանց ձայն տուեալ աօելով՝ Զի կալէք։ վասն որոյ և անուն տեղւոյն Զիակալի վանք կոչեցեալ մինչև ցայսօր ժամանակի։ Իսկ արանցն քրիստոսասիրաց հեծեալք յիւրաքանչիւր երիվարս, ժողովեալք ի ըլուրն՝ կարգեցին ռազմն»։ Բայց իսկոյն սմափուում են և առանց դիմադրութեան անձնատուր են լինում և նահատակուում։ Ատոմի հետն էր և իւր անչափահաս որդին, որին նորագոյն ճառընտիրները և Յայսմաւուրքը տալիս են Վարոս անունը, որն և ամենից առաջ նահատակուեց։ — «Իսկ սուրբն Ատոմ զսքանչելատեսիլ զորդեակն իւր առաջի արարեալ ի ժամ կատարմանն՝ զանգիտեալ ի մանկական տիոցն. իսկ նորա յօժարութեամբ յառաջեալ քան զամենեսեան՝ բարի խոստովանութեամբ ի Քրիստոս կատարէր և պսակէր։ Մի պարսիկ անցնում է Հայոց կողմը և հաւերի հետ միասին նահատակուում, իսկ մի հայ փախչում է և հովուի հետ շորերը փոխելով ազատուում։ — «Մի ոմն թշուառացեալ ի գնդէն Հայոց՝ փախստեայ անկանի առ հովիւ միւ և առեալ զհովուական մախազն, կերպարանեալ զինքն ձեռք հովուին, փոխանակեալ զլուսեղէն պատմուճանն և զմշտնջենաւոր կեանսն ընդ զազրատեսիլ զգեստուն և ընդ առօրեայ կենաց»։ Նահատակուում են Ատոմը և իւր որդին (Վարոսը) Գնունեաց ազդից, Վարսը՝ կամ ուրիշ Զ-րի համեմատ՝ Վարդանը Աստան տանից, ներսեհը Արուանդունի տանից, Վարձաւորը և ուրիշներ։

«Ոչխարաց» գիւղի Ոշխարանից կամ Ոչխարաց վանքի մօտ նահատակուում է Մանաճիհը Խշտունին իւր մարդկանցով։ Ահա այս է Տաճատ Վարագեցու գրութեան համառօտութիւնը, որն և ծառայել է իրրեւ նիւթ Հայրիկի քերթուածին։ Աւսուցչապետ Մառը մի քանի ուրիշ հայ վկայաբանութեանց հետ գտաւ և Ատոմեանց վկայաբանութիւնը վրաց 10-դ դարի մի ձեռագրում։ Բայց այս բոլորին, ինչպէս խոստացանք, կվերտառառնանք մենք քննադատօրէն մի ուրիշ անգամ։ Հայրիկի բազմաթիւ չափաւոր գրուածք-

Ներից ամենից աւելի յաջողուածն է թւռւմ ինձ այս քերթուածը, մանաւանդ այս քերթուածի վերջին տները՝ «Մնասջիր բարեաւ Հայրենիք և լերինք Անձեացեաց . . . . իւր շարունակութեամբ»:

P. S. U.

h Shesusu

ԱՆՁՆԱԾՈՒՅԹ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ

ԱՏՊՄԵԱՆՑ ԶՈՐԱՎԱՐԱՑ

2 b 4 U.L.B.

Զի կալէք, ձի կալէք, ձայն տայ ձեզ դոչէ  
Զօրավար գնդին Գնումնին Ատոմ.  
Ահա եկին հասին ի վերայ մեր  
Մոլեկուն պարսկական ջոլիբ սևադունդ:  
Զի՞նչ կամէք և զի՞նչ ընտրէք, իշխան Բռըշտունի  
Եւ զինակիցք իմ քաջակորով՝  
Զման մարտիրոսական, երկնային աղատութիւն,  
Թէ զիետնո աշխարհի, հարածանք և ստրկութիւն.

Ամբարգտին լուծ

## ԱՐԵԼ ՀԱՐԱՀԱՐ:

Ուէ ասէք բանալ խաչին դրօշ  
Արիապէս մարտնչիլ ընդ խաչի թշնամոյն,  
Որպէս քաջամարտիկ անձնուէր զինուոր,  
Վասն Քրիստոսի հաւատոյն և մեր Հայրենեաց սիրոյն,  
Թէ ի բաց եղեալ սուր կամովին կալ անմռունչ,  
Որպէս գոյխար ի գենումն:

Խնդացեր, երանի է մեռ,

Թէ հետեւով հետոց խաչելոյն